## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հոկտեմբերի 2020 թվականի N 99-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Հովհաննես Գեղամի Ազիզբեկյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասին /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2283074, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0008-0052/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 1-ին փողոց N 34/2 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի հոկտեմբերի 6
գ.Գետամեջ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հոկտեմբերի 2020 թվականի N 100-Ա

### ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Նախկին Պտղնի-1, վերին տեղամաս թիվ 205 այգեգործական հողամասի հասցեում գտնվող Բաբկեն Դավիթի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1146621/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 8-րդ փողոց N 26 այգեհողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի հոկտեմբերի 6
գ.Գետամեջ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հոկտեմբերի 2020 թվականի N 101-Ա

### ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Համայնք Գետամեջ 10-րդ փողոց 135 այգետնակ հասցեում գտնվող Վարդուհի Մովսեսի Խեբոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07102020-07-0059, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0214-0008/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 10-րդ փողոց N 17 այգետնակ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի հոկտեմբերի 8
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamejmc@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հոկտեմբերի 2020 թվականի N 102-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 41-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետով, 34-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)՝ համաձայն N1 հավելվածի:
2. Հանձնաժողովի կազմում ձևավորել աշխատանքային խմբեր՝ համաձայն N2 հավելվածի:
3. Հաստատել հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N3 հավելվածի:
4. Գետամեջի միջնակարգ դպրոցի բազայի վրա ստեղծել տարահանման (ընդունման) հավաքակայան, որի պետը ի պաշտոնե համարել դպրոցի տնօրեն Լիանա Գեղամյանին:
5. Գետամեջի միջնակարգ դպրոցի բազայի վրա ստեղծել ժամանակավոր տեղակայման կետ, որի պետը ի պաշտոնե համարել դպրոցի ուսուցչուհի Ալվարդ Սարգսյանին:
6. Տարահանման (ընդունման) հավաքակայանի և ժամանակավոր տեղակայման պետերին ՝ 10 օրյա ժամկետում իմ հաստատմանը ներկայացնել հավաքակայանի և ժամանակավոր տեղակայման կետի անձնակազմի պարտականությունները՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության հետ:

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2013 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքում բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին» N 55 որոշումը:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Մերուժան Պապոյանի վրա:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի [illegible] 8
գ.Գետամեջ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի
2020 թվականի հոկտեմբերի 8-ի
N 102-Ա որոշման

# Կ Ա Զ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Մերուժան Ռաֆիկի Պապոյան - Գետամեջ համայնքի ղեկավարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ),
2. Աշոտ Աշոտի Ոսկանյան - Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (հանձնաժողովի նախագահի տեղակալ),
3. Կարեն Անդրանիկի Սարգսյան - Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (հանձնաժողովի քարտուղար),
4. Ռուզաննա Մուրադի Սարգսյան - Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (հանձնաժողովի անդամ),
5. Սարիկ Ռաֆիկի Ղազարյան - Գետամեջ համայնքի ավագանու անդամ (հանձնաժողովի անդամ),
6. Արտուշ Հակոբի Կարապետյան - Գետամեջ համայնքի ավագանու անդամ (հանձնաժողովի անդամ),
7. Սասուն Հրայրի Մինասյան - Գետամեջ համայնքի բնակիչ (հանձնաժողովի անդամ):

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի
2020 թվականի հոկտեմբերի 8-ի
N 102-Ա որոշման

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

**1. Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբ.**

| | |
|---|---|
| 1) Կարապետյան Արտուշ | խմբի ղեկավար, Գետամեջ համայնքի ավագանու անդամ |
| 2) Ղազարյան Սարիկ | անդամ, Գետամեջ համայնքի ավագանու անդամ |
| 3) Զոհրաբյան Կարեն | անդամ, Գետամեջ համայնքի բնակիչ |

**2. Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբ.**

| | |
|---|---|
| 1) Գրիգորյան Գրիշա | խմբի ղեկավար, Գետամեջ համայնքի ավագանու անդամ |
| 2) Սարգսյան Անդրանիկ | անդամ, Գետամեջ համայնքի ավագանու անդամ |
| 3) Գրիգորյան Գևորգ | անդամ, Գետամեջ համայնքի բնակիչ |

**3. Տրանսպորտային ապահովման խումբ.**

| | |
|---|---|
| 1) Գրիգորյան Արայիկ | խմբի ղեկավար, Գետամեջ համայնքի բնակիչ |
| 2) Պետրոսյան Ասատուր | անդամ, Գետամեջ համայնքի բնակիչ |
| 3) Զոհրաբյան Մանուկ | անդամ, Գետամեջ համայնքի բնակիչ |

**4. Ընտանիքների և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ.**

| | |
|---|---|
| 1) Դավթյան Կարեն | խմբի ղեկավար, Գետամեջ համայնքի բնակիչ |
| 2) Կարապետյան Գարիկ | անդամ, Գետամեջ համայնքի բնակիչ |
| 3) Աբրահամյան Արշավիր | անդամ, Գետամեջ համայնքի բնակիչ: |

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի
2020 թվականի հոկտեմբերի 8-ի
N 102-Ա որոշման

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ու Թ Յ Ու Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Տարահանման հանձնաժողովի մասին Կանոնադրությունը սահմանում է տարահանման հանձնաժողովի ստեղծման կարգը, կազմը և հիմնական խնդիրները խաղաղ, արտակարգ իրավիճակների ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ:

2. Տարահանման հանձնաժողովը ստեղծվում է համայնքի ղեկավարի որոշմամբ, որպես մշտական գործող տարահանման մարմին՝ բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ տարածքներ տարահանման միջոցառումների նախօրոք պլանավորման, տարահանման մարմինների ստեղծման ու նախապատրաստման և տարահանման միջոցառումների անցկացման ու բազմակողմանի ապահովման նպատակով:

3. Տարահանման հանձնաժողովի գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է համայնքի ղեկավարը: Տարահանման հանձնաժողովի անմիջական ղեկավարումը դրվում է համայնքի ղեկավարի տեղակալի՝ տարահանման հանձնաժողովի նախագահի վրա:

4. Տարահանման հանձնաժողովն աշխատում է Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության հետ համագործակցությամբ, որն իրականացնում է նրա գործունեության կազմակերպա-մեթոդական ապահովումը:

5. Տարահանման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, այլ նորմատիվ իրավական փաստաթղթերով և սույն Կանոնադրությամբ:

### II. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Խաղաղ ժամանակ՝

1) Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ ՄՓՎ հետ համատեղ ռազմական դրության ժամանակ և ԱԻ ծագման ու սպառնալիքի դեպքում բնակչության տարահանման պլանի մշակում և տարին մեկ անգամ ճշգրտում.

2) անվտանգ գոտում տարահանվող բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղաբաշխման վայրերի ընտրում.

3) տարահանման պլանների, ինչպես նաև տարահանվող բնակչության անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման, առաջնահերթ կենսաապահովման պլանների մշակում.

4) մասնակցություն տարահանման մարմինների տարահանման միջոցառումների անցկացման պատրաստականության ստուգմանը.

5) մասնակցություն քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով ուսումնավարժություններին՝ մշակված տարահանման փաստաթղթերի իրականության ստուգման և տարահանման միջոցառումների կազմակերպման և անցկացման հարցերով գործնական հմտությունների ձեռքբերման նպատակով.

6) բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման նախապատրաստում , տարահանման փաստաթղթերի մշակում և հաշվառում:

7. ՔՊ համակարգը խաղաղից ռազմական դրության փոխադրելու դեպքում՝

1) կառավարման, կապի և ազդարարման համակարգերի պատրաստականության բերման, ինչպես նաև տարահանման մարմինների ծավալման իրականացում.

2) տարահանվող բնակչության թվաքանակի և կարգի ճշգրտում, տարահանման պլանների, տարահանման բոլոր տեսակների ապահովման իրականացման և կարգի ճշգրտում.

3) վտանգավոր գոտուց, ինչպես նաև տարահանման միջանկյալ կետերից բնակչության դուրս բերման և անվտանգ վայրերում տեղաբաշխման համար հատկացված տրանսպորտային միջոցների նախապատրաստման իրականացում.

4) առկա պաշտպանական կառույցների պատրաստականության բերման վերահսկողություն.

5) անվտանգ գոտում ընդունման, տեղաբաշխման և բնակչության առաջնահերթ կենսաապահովման պլանների ճշգրտում:

8. Տարահանման անցկացման կարգադրություն ստանալիս՝

1) տարահանման հանձնաժողովի կազմին ժամանակին ազդարարման, հավաքի և տարահանված բնակչությանը անվտանգ վայրեր տեղափոխելու աշխատանքների իրականացում.

2) տարահանման միջոցառումների բազմակողմանի ապահովման, ընդունման, բաշխման և անվտանգ գոտում տարահանված բնակչության առաջնահերթ կենսաապահովման աշխատանքների կազմակերպում և իրականացում.

3) տարահանման պլանի ճշգրտման կատարում.

4) բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման մասին տվյալների հավաք և ամփոփում, դրա մասին զեկուցում վերադասին:

9. Խաղաղ ժամանակ բնական և տեխնածին բնույթի ԱԻ ծագման սպառնալիքի դեպքում՝

1) տարահանվող բնակչության ընդունման և տեղաբաշխման պլանավորում.

2) կապի և ազդարարման համակարգերի պատրաստության ստուգում.

3) տարահանման ենթակա բնակչության թվաքանակի ճշտում.

4) տարահանման մարմինների ծավալման պատրաստության բերում.

5) տարահանման միջոցառումների ապահովման համար տրանսպորտի պատրաստության վերահսկողություն.

6) առկա պաշտպանական կառույցների պատրաստության վերահսկողություն.

7) անվտանգ վայրերում, ժամանակավոր տեղակայման կետերում տեղաբաշխման վայրերի պատրաստության հսկողություն:

9. Տարահանման միջոցառումների անցկացման կարգադրություն ստանալիս՝

1) տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում կառավարման և կապի կազմակերպում.

2) տրանսպորտային ապահովման կազմակերպում.

3) բժշկասիտական հսկողության, բնակչության սանիտարական մշակման, տեխնիկայի և հագուստի հատուկ մշակման (անհրաժեշտության դեպքում) կազմակերպում.

4) տարահանվող բնակչության ընդունման, հաշվառման և տեղաբաշխման վայրեր տեղափոխման կազմակերպումը.

5) բնակչության առաջնահերթ կենսաապահովման կազմակերպում:

## III. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

10. Տարահանման հանձնաժողովն իրավունք ունի՝

1) իր իրավասությունների շրջանակներում ընդունելու որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման կազմակերպությունների, հաստատությունների և ձեռնարկությունների համար՝ կապված տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման հետ:

2) հարցում անել կազմակերպություններից, հաստատություններից անհրաժեշտ տվյալների մասին՝ բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման հարցերի ուսումնասիրման և որոշումների ընդունման համար:

3) Տարահանման միջոցառումների ապահովման հարցերով ունկնդրել կազմակերպությունների, հաստատությունների պաշտոնատար անձանց, սահմանված կարգով անցկացնել խորհրդակցություն տարահանման մարմինների ներկայացուցիչների հետ:

## IV. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

11. Տարահանման հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքում ընդգրկվում են՝

1) տարահանման հանձնաժողովի ղեկավարությունը.

2) վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբ.

3) անվտանգ տարածքում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբ.

4) տրանսպորտային ապահովման խումբ.

5) սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ:

12. Տարահանման հանձնաժողովի կազմում նշանակվում են՝ տեղական ինքնակառավարման

մարմինների, տարահանման միջոցառումների ապահովմանը մասնակցող կապ ապահովող կազմակերպության, տնտեսության օբյեկտների պաշտոնատար անձինք՝ բացառությամբ զորահավաքային կարգադրագիր ունեցող անձանց:

## V. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԸ

13. Տարահանման հանձնաժողովի նախագահը կրում է անձնական պատասխանատվություն խաղաղ ժամանակ, ԱԻ ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ տարահանման հանձնաժողովի վրա դրված խնդիրների կատարման համար:

14. Տարահանման հանձնաժողովի որոշումները ձևակերպվում են տարահանման հանձնաժողովի արձանագրություններով և ստորագրվում տարահանման հանձնաժողովի նախագահի և տարահանման հանձնաժողովի քարտուղարի կողմից:

15. Տարահանման հանձնաժողովի նիստերն անցկացվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ՝ տարահանման հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ: Տարահանման հանձնաժողովի նիստերը և արձանագրությունների նախագծերը պատրաստում է տարահանման հանձնաժողովի աշխատանքային խումբը:

16. Տարահանման հանձնաժողովի առանձին պլանային և արտապլանային նիստերը կարող է անցկացնել տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալը՝ տարահանման հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

17. Տարահանման հանձնաժողովի անդամների աշխատանքների կազմակերպման առանձնահատկություններին են վերաբերում նրանց աշխատատեղեր (հավաքի հաստատված վայրեր) ժամանելը հետևյալ ժամանակային նորմատիվներում՝

1) աշխատանքային ժամին՝ 30 րոպե,

2) ոչ աշխատանքային ժամին՝ 1 ժամ 30 րոպե (ձմեռային ժամանակ՝ 2 ժամ):

## VI. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

18. Տարահանման հանձնաժողովի գործունեության կազմակերպա-տեխնիկական ապահովումը իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՀԿ ԱՆՁՆԱԿԱԶՄ

| Հ/Հ | ՏՀԿ-ում զբաղեցրած պաշտոնը | ԱԱՀ | Հասցեն | Քաղաքացիական պաշտոնը | Հեռախոս (աշխ/բն/բջջ) | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | ՏՀԿ պետ | Գեղամյան Լիանա Վանիկի | ք. Երևան, Սարի թաղ 9-րդ փողոց տուն 29/2 | դպրոցի տնօրեն | 077570478 | |
| 2. | ՏՀԿ պետի տեղակալ | Պապոյան Մերուժան Ռաֆիկի | ք. Երևան, Արշակունյաց 34/9 բն. 118 | ուսուցիչ | 04229566 | |
| 3. | ՏՀԿ հերթապահ | Թովմասյան Նարինե Գնելի | 2-րդ փողոց տուն 1 | ուսուցիչ | 093008972 | |
| 4. | Հեռախոսավար | Գրիգորյան Հայկուհի Արսենի | 3-րդ փողոց 3-րդ փակուղի տուն 13 | համայնքի բնակիչ | 093595307 | |
| **Ընդունման, հաշվառման և բաշխման խումբ** | | | | | | |
| 1. | Խմբի պետ | Գրիգորյան Գրիշա Սերոբի | 5-րդ փողոց տուն 5 | ավագանու անդամ | 094154404 | |
| 2. | Հաշվառող | Սարգսյան Անդրանիկ Պողոսի | 4-րդ փողոց տուն 9 | ավագանու անդամ | 094028387 | |
| 3. | Հաշվառող | Գրիգորյան Գևորգ Արայիկի | 3-րդ փողոց տուն 18 | համայնքի բնակիչ | 098044622 | |
| 4. | Հաշվառող | Մկրտչյան Աղվան Վազգենի | 3-րդ փողոց տուն 6 | համայնքի բնակիչ | 077387599 | |
| **Շարասյուների կազմավորման խումբ** | | | | | | |
| 1. | Խմբի պետ | Գրիգորյան Արայիկ Սրապիոնի | 3-րդ փողոց տուն 18 | համայնքի բնակիչ | 094088814 | |
| 2. | Պետի տեղակալ | Գրիգորյան Լյուդվիգ Կարենի | 3-րդ փողոց տուն 4 | համայնքի բնակիչ | 043106600 | |
| 3. | Օգնական | Պետրոսյան Ասատուր Ազատի | 4-րդ փողոց տուն 7 | համայնքի բնակիչ | 094450035 | |
| **Հասարակական կարգի պահպանման խումբ** | | | | | | |
| 1. | Խմբի պետ | Գյուլնազարյան Շուշանիկ Վիգենի | 5-րդ փողոց տուն 30 | ուսուցիչ | 093727122 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | Օգնական | Ղազարյան Ռաֆիկ Համբարձումի | 5-րդ փողոց տուն 25 | համայնքի բնակիչ | 093708343 | |
| **Տեղեկատու սեղան** | | | | | | |
| 1. | Պետ | Չերքեզյան Ռուզաննա Ռաֆիկի | 3-րդ փողոց տուն 23/1 | ուսուցիչ | 098434048 | |
| 2. | Օգնական | Սարգսյան Պողոս Անդրանիկի | 4-րդ փողոց տուն 9 | համայնքի բնակիչ | 098192951 | |
| **Պարետ** | | | | | | |
| 1. | Պարետ | Դավթյան Կարեն Գրիշայի | 3-րդ փողոց տուն 14 | համայնքի բնակիչ | 093647432 | |
| 2. | Օգնական | Աբրահամյան Արշավիր Գևորգի | 4-րդ փողոց տուն 2 | համայնքի բնակիչ | 077007720 | |
| **Մոր և մանկան սենյակ** | | | | | | |
| 1. | Պետ | Խուրշուդյան Էթերինա Սերյոժայի | 4-րդ փողոց տուն 4 | ուսուցիչ | 094417107 | |
| 2. | Բուժքույր | Եփրեմյան Հրանուշ Լադիկի | 3-րդ փողոց 3-րդ փակուղի տուն 5 | ուսուցիչ | 094606215 | |
| **Բժշկական կետ** | | | | | | |
| 1. | Պետ | Ավետիսյան Գոհար Սաղաթելի | 3-րդ փողոց 3-րդ փակուղի տուն 9 | ԲՄԿ-ի վարիչ | 077259635 | |
| 2. | Սանիտար | Շահինյան Կարինե Հակոբի | 3-րդ փողոց տուն 15 | տեխ. սպասարկող | 077609409 | |

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՀԿ ՊԵՏ Լ. ԳԵՂԱՄՅԱՆ

## ՍԽԵՄԱ

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ

**ՏՀԿ պետ**
**Գեղամյան Լիանա**
**094159092**

ՏՀԿ հերթապահ – Թովմասյան Նարինե
077008972
Հեռախոսավար - Գրիգորյան Հայկուհի
093595307

ՏՀԿ պետի տեղակալ –
Պապոյան Մերուժան
094229566

Տեղեկատու սեղան
Պետ - Չերքեզյան Ռուզաննա 098434048
Օգնական - Սարգսյան Պողոս 098192951

Հասարակական կարգի
պահպանման խումբ
Պետ – Գյուլնազարյան Շուշանիկ
093727122
Օգնական – Ղազարյան Ռաֆիկ
093708343

Ընդունման, հաշվառման և բաշխման խումբ
Պետ – Գրիգորյան Գրիշա 094154404
Հաշվառող – Սարգսյան Անդրանիկ 094028387
Հաշվառող – Գրիգորյան Գևորգ 098044622
Հաշվառող – Մկրտչյան Աղվան 077387599

Բժշկական կետ
Պետ - Ավետիսյան Գոհար
077259635
Սանիտար - Շահինյան Կարինե
077609409

Մոր և մանկան սենյակ
Պետ - Խուրշուդյան Էթերինա
094417107
Բուժքույր – Եփրեմյան Հրանուշ
094606215

Պարետ - Դավթյան Կարեն
093647432
Օգնական - Աբրահամյան
Արշավիր
077007720

Շարասյուների կազմավորման խումբ
Պետ – Գրիգորյան Արայիկ 094088814
Պետի տեղակալ – Զոհրաբյան Մանուկ 098070037
Օգնական – Պետրոսյան Ասատուր 094450035

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՀԿ ՊԵՏ      Լ. ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՏԿ-Ի ԱՆՁՆԱԿԱԶՄԻ

| Հ/Հ | ԺՏԿ – ում զբաղեցրած պաշտոնը | Ա.Ա.Հ. | Հասցեն | Քաղաքացիական զբաղեցրած պաշտոնը | Հեռախոս ( ծառ/ բնակ) | Ծանոթութ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. | ԺՏԿ– Ի պետ | Սարգսյան Ալվարդ Մուրադի | 3-րդ փողոց տուն 13 | ուսուցիչ | 098117955 | |
| 2. | ԺՏԿ – Ի պետի տեղակալ | Բաբաջանյան Ջինաիդա Սամսոնի | 1-ին փողոց 2-րդ փակուղի տուն 1 | դպրոցի տնտեսվար | 077102322 | |
| Ընդունման և հաշվառման խումբ | | | | | | |
| 1. | Խմբի պետ | Ջոհրաբյան Կարեն Ջոհիկի | 4-րդ փողոց տուն 18 | համայնքի բնակիչ | 093591515 | |
| 2. | Հաշվառող | Աբրահամյան Արմենուհի Գևորգի | 4-րդ փողոց տուն 4 | համայնքի բնակիչ | 098406145 | |
| Հասարակական կարգի պահպանման խումբ | | | | | | |
| 1. | Խմբի պետ | Ղազարյան Սարիկ Ռաֆիկի | 5-րդ փողոց տուն 25 | ավագանու անդամ | 077700972 | |
| 2. | Օգնական | Գևորգյան Ռուբեն Արթուրի | 3-րդ փողոց տուն 13 | համայնքի բնակիչ | 077118852 | |
| **Տեղեկատու սեղան** | | | | | | |
| 1. | Պետ | Սարգսյան Գայանե Իվանի | 5-րդ փողոց 2-րդ փակուղի տուն 1 | ուսուցիչ | 098651027 | |
| 2. | Օգնական | Պետրոսյան Հերմինե Ազատի | 4-րդ փողոց տուն 7 | համայնքի բնակիչ | 093460680 | |
| **Պարետ** | | | | | | |
| 1. | Պարետ | Խուրշուդյան Թամարա Արմենակի | 3-րդ փողոց տուն 13 | դպրոցի պահակ | 098117355 | |
| 2. | Օգնական | Աբրահամյան Արմեն Գևորգի | 4-րդ փողոց տուն 2 | համայնքի բնակիչ | 077512892 | |
| **Պարենային և ոչ պարենային ապրանքների ընդունման և բաշխման խումբ** | | | | | | |
| 1. | Խմբի պետ | Կարապետյան Արտուշ Հակոբի | 3-րդ փողոց տուն 15 | համայնքի բնակիչ | 077609409 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | խոհարար | Գալստյան Գոհար Սեյրանի | 3-րդ փողոց տուն 26 | համայնքի բնակիչ | 094190873 | |
| 3. | Օգնական | Մինասյան Սուսաննա Հրայրի | 4-րդ փողոց տուն 3 | համայնքի բնակիչ | 094096062 | |
| **Հակաիրդեհային պաշտպանության խումբ** | | | | | | |
| 1. | Խմբի պետ | Խուրշուդյան Արամ Սերյոժայի | 3-րդ փողոց տուն 21 | համայնքի բնակիչ | 094930935 | |
| 2. | հրշեջ | Աբրահամյան Արա Արամի | 3-րդ փողոց տուն 23/1 | համայնքի բնակիչ | 094434049 | |

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՏԿ – Ի ՊԵՏ՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Ս Խ Ե Մ Ա

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԿԵՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ




ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՏԿ – Ի ՊԵՏ՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հոկտեմբերի 2020 թվականի N 103-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 8-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման հավելվածի 52-րդ կետի պահանջների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի բնակչության տարահանման պլանը համաձայն N 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի բնակչության տարահանման պլանի կատարումն ապահովվող փաստաթղթերը՝ համաձայն NN 2-11 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովի նախագահին.

1) յուրաքանչյուր տարի ճշտել համայնքի բնակչության տարահանման պլանը,

2) մշտական հսկողություն իրականացնել համայնքում ստեղծված տարահանման մարմիններում անհրաժեշտ փաստաթղթերի առկայության և անձնակազմի համալրվածության ուղղությամբ:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2015 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի բնակչության տարահանման պլանը հաստատելու մասին» N 22-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2020 թվականի հոկտեմբերի 8
գ.Գետամեջ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գետամեջ համայնքի ղեկավարի 2020 թվականի
հոկտեմբերի 8-ի N 103-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ

# Պ Լ Ա Ն

ՀԱՄԱՅՆՔ ԳԵՏԱՄԵՋ
2020 ԹՎԱԿԱՆ

## I. ՊԼԱՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

1. **Բնակչության տարահանում՝** արտակարգ իրավիճակներում կամ ռազմական դրության ժամանակ վտանգավոր տարածքներից բնակչության կազմակերպված դուրս բերում և ժամանակավոր տեղաբաշխում կենսաապահովման համար նախապես պատրաստված անվտանգ տարածքներում.
2. **Տարահանման հանձնաժողով՝** տարահանման հանձնաժողով՝ նշանակված կազմ, որը կազմակերպում ու ղեկավարում է տվյալ տարածքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման միջոցառումները.
3. **Տարահանման հավաքակայան՝** տարահանվող բնակչության ընդունման և հաշվառման հավաքատեղի.
4. **Ընդունման հավաքակայան՝** հավաքատեղի, որտեղ ընդունվում, հաշվառվում և բաշխվում է տարահանված բնակչությունը՝ ըստ ժամանակավոր կացարանների, իսկ նյութական ու մշակութային արժեքները՝ ըստ պահպանման շինությունների.
5. **Ընդհանուր տարահանում՝** տվյալ տարածքի (բնակավայրի) ամբողջ բնակչության տարահանում.
6. **Մասնակի տարահանում՝** մինչև 16 տարեկան երեխաների, հղի և մինչև 8 տարեկան երեխա ունեցող կանանց, 8-16 տարեկան երեխա ունեցող այն կանանց, որոնց ընտանիքների կազմում չկան տարահանման ենթակա՝ աշխատունակ անդամներ, հաշմանդամների և կենսաթոշակառուների տարահանում կամ տվյալ տարածքի բնակչության մի մասի տարահանում.
7. **Տարահանման երթուղի՝** տարահանվող բնակչության բնակավայրը տեղաբաշխման բնակավայրին միացնող ճանապարհ (ճանապարհահատված).
8. **Տարահանման ավտոշարասյուն՝** տարահանման հավաքակայանից (բնակավայրերից) ընդունման հավաքակայան (բնակավայր) մեկնող երկու կամ ավելի ավտոմեքենայից բաղկացած շարասյուն.
9. **Տարահանման հետիոտն շարասյուն՝** տարահանման հավաքակայանից (բնակավայրից) ընդունման հավաքակայան (բնակավայր) տեղափոխվող հետիոտն կազմակերպված խումբ.
10. **Տարահանման պլան՝** նախապես մշակված փաստաթուղթ, որով կանոնակարգվում են մեկ տարածքից (բնակավայրից, կազմակերպությունից) մեկ այլ տարածք բնակչության (աշխատողների) տեղափոխման, տեղաբաշխման և բազմակողմանի կենսաապահովման միջոցառումները, ինչպես նաև՝ նյութական և մշակութային արժեքների տեղափոխումը և պահպանումը.
11. **Վտանգավոր տարածք՝** տեղանք կամ առանձին բնակավայր, կազմակերպություն, որտեղ արտակարգ իրավիճակի կամ ռազմական դրության հետևանքով առաջացել կամ կարող են առաջանալ մարդկանց կյանքի, առողջության և բնականոն կենսագործունեության վրա բացասաբար ազդող գործոններ.
12. **Անվտանգ տարածք՝** վտանգավոր տարածքից դուրս գտնվող, տեղի ու տարահանվող բնակչության կենսաապահովման, ինչպես նաև մշակութային և նյութական արժեքների տեղաբաշխման ու պահպանման համար նախապատրաստված տարածք.
13. **Տարահանում՝** արտակարգ իրավիճակներում կամ ռազմական դրության ժամանակ վտանգավոր տարածքից անվտանգ տարածք բնակչության, նյութական ու մշակութային արժեքների ժամանակավոր տեղափոխում և տեղաբաշխում.
14. **Ժամանակավոր տեղակայման կետ՝** տարահանված բնակչության կարճաժամկետ տեղակայման համար նախատեսված կազմակերպություն (տարածք).

15. **Երկարատև բնակության կետ՝** տարահանված բնակչության երկարատև տեղակայման և կենսաապահովման համար նախատեսված կազմակերպություն (տարածք).
16. **Նյութական արժեքներ՝** արտադրական և գիտական արժեքներ, գյուղատնտեսական կենդանիներ, սննդամթերքի, դեղորայքի, բժշկասանիտարական (սանիտարատնտեսական և սանիտարատեխնիկական) գույքի և ապրանքների պաշարներ, որոնք նախատեսված են օգտագործման համար.
17. **Տարահանման միջոցառումներ՝** արտակարգ իրավիճակներում կամ ռազմական դրության ժամանակ վտանգավոր տարածքից անվտանգ տարածք բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման ապահովման միջոցառումների համալիր.
18. **Տարահանման մարմիններ՝** մարմիններ, որոնց վրա անմիջականորեն դրվում են բնակչության տարահանման պլանավորումը, կազմակերպումը և իրականացումը.
19. **Տարահանման միջանկյալ կետ՝** (կարճաժամկետ տեղակայման կետ)՝ ստեղծվում է վտանգավոր գոտու սահմաններից դուրս՝ մոտակա բնակավայրերին և հաղորդակցման ուղիներին մոտ.
20. **Կառավարման խմբեր՝** ստեղծվում են տարահանման հետիոտն շարասյուների շարժման կազմակերպման համար.

## II. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

21. Գետամեջ գյուղը գտնվում է Կոտայքի մարզում, Հրազդանի կիրճում, գետի ձախ ափին, մարզկենտրոնից 40 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1340 մ. բարձրության վրա: Համայնքի կլիմայական պայմանները՝ բարեխառն, մեղմ ձմեռով, համեմատաբար չոր եղանակով:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ և դաշտավարությամբ:

Համայնքի բնակչության թիվը կազմում է 850 մարդ, որից 430 արական սեռի, իսկ 420 իգական: Ըստ տարիքի՝ մինչև 1 տարեկան-5, 1-3 տարեկան-23 , 4-6 տարեկան-25, 7-17 տարեկան-114, 18-64 տարեկան-573, 64-ից բարձր-111 :

Բնակելի տների ընդհանուր քանակը 201, որից 200-ը առանձնատներ, իսկ 1-ը բազմաբնակարան շենք:

Համայնքի տարածքում է գտնվում դպրոցը, համայնքապետարանի վարչական շենքը, որում ընդգրկված է նաև մշակույթի տունը, գրադարանը, բուժակ-մանկաբարձական կետը (ԲՄԿ):

Համայնքի ջրամատակարարումն իրականացվում է «Արզնի-Երևան» և «Արզական-Երևան» ջրատարներից:

Համայնքի էներգամատակարարման գծերի ընդհանուր երկարությունը կազմում է 2500 մ.:

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կազմում է խոշոր եղջերավոր անասուններ 67 գլուխ, մանր եղջերավոր անասուններ 10 գլուխ, խոզեր 320 գլուխ, մեղվաընտանիքներ 22, ճագարներ 38 գլուխ, թռչուններ 1127 թև:

## III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

22. Համայնքում տարահանումը բնակչության պաշտպանության հիմնական ձևերից մեկն է: Այն իրականացվում է վտանգավոր տարածքից անվտանգ տարածքներ մարդկանց ժամանակավոր տեղափոխման և տեղաբաշխման միջոցով:
23. Բնակչության տարահանման պլանավորումը և կազմակերպումը, տարահանված բնակչության տեղաբաշխումը ու բազմակողմանի կենսաապահովումը և արտակարգ իրավիճակների վերացումից հետո նրա վերադարձը մշտական բնակության վայրերն իրականացվում է համայնքի տարահանման հանձնաժողովի միջոցով:
(Տարահանման միջոցառումների կառավարումը հավելված 2 )
24. Գետամեջ համայնքի բնակչության տարահանումը նախատեսվում է իրականացնել երկրաշարժի հետևանքով ավերված և բնակվելու համար վտանգավոր շենքերից (ելնելով ստեղծված իրավիճակից), ինչպես նաև Հրազդան գետի հունի բարձրացման ժամանակ առաջացվող ջրածածկման տարածքներից:

### 3.1. Արտակարգ իրավիճակների ժամանակ համայնքի ղեկավար կազմի և բնակչության ազդարարման կարգը տարահանում սկսելու մասին

25. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ստանալով արտակարգ իրավիճակի մասին հաղորդագրությունը, այն փոխանցում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման կենտրոն (ՃԿԿ) և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին.
26. Զուգահեռ՝ մարզային փրկարարական վարչության կրտսեր հրահանգիչը իրականացնում է համայնքի ղեկավար և տարահանման հանձնաժողովների նախագահի ազդարարումը:
27. Համայնքի ղեկավար կազմի և բնակչության ազդարարման իրականացվում է համայնքի կողմից. Իսկ ազդարարման համակարգի խափանման դեպքում համայնքի ղեկավար կազմի ազդարարումն իրականացվում է սուրհանդակների, իսկ տուժած բնակչության իրազեկումը և վարվելակերպի մասին կանոնները՝ համայնքի ոստիկանության շարժական ուժերով ու միջոցներով: ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի տարահանման հանձնաժողովի անձնակազմի ազդարարման սխեման ներկայացված է հավելված N 3-ում:

### 3.2. Տարահանման մասին որոշում ընդունող մարմինները, բնակչության տարահանման կազմակերպումն ու իրականացումը

28. Տարահանման մասին որոշում ընդունող պաշտոնատար անձը պարտավոր է ընդունված որոշման մասին տեղեկացնել լիազորված մարմնին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն (ճգնաժամային կառավարման կենտրոնին):
29. Արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների վերացման համար պատասխանատվություն է կրում համայնքի ղեկավարը, ով իրավունք ունի ինքնուրույն որոշում ընդունելու վտանգավոր տարածքից բնակչությանն անվտանգ վայր տեղափոխելու վերաբերյալ:

30. Բնակչության տարահանման պլանավորումը և կազմակերպումը, տարահանված բնակչության տեղաբաշխումը ու բազմակողմանի կենսաապահովումը և արտակարգ իրավիճակների վերացումից հետո նրա վերադարձը մշտական բնակության վայրերն իրականացվում է համայնքի տարահանման հանձնաժողովների միջոցով:

### 3.3. Տարահանման միջոցառումների ընդհանուր ղեկավարումը

31. Տարահանման միջոցառումների ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 102-Ա որոշմամբ ստեղծված համայնքային տարահանման հանձնաժողովը, որը կազմակերպում և ղեկավարում է համայնքի բնակչության ու կազմակերպությունների տարահանման միջոցառումները: Տարահանվող բնակչության ընդունման և հաշվառման միջոցառումների լիարժեք իրականացման նպատակով ստեղծված է տարահանման հավաքակայան, որոնք հանդիսանում են նաև ընդունման հավաքակայաններ, որտեղ կատարվում է տարահանված բնակչության ընդունումը, հաշվառումը և բաշխումն ըստ ժամանակավոր տեղակայման կետերի:
(Տարահանման հանձնաժողովի և աշխատանքային խմբերի ցուցակ հավելված 4, Տարահանման հանձնաժողովի աշխատանքային օրացուցային պլան հավելված 10):

## IV . ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

### 4.1. Տարահանման կազմակերպումը երկրաշարժի ժամանակ

32. Ուժեղ երկրաշարժի դեպքում էպիկենտրոնը Գառնի՝ $\lambda=44^0\ 80'$, $\varphi=40^0 10'$, M=7.0, H=15 կմ Գետամեջ համայնքի վարչական տարածքում երկրաշարժի ուժգնությունը կարող է հասնել 10 բալի:
10 բալ ուժգնության երկրաշարժի դեպքում համայնքի բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կկազմեն 183 մարդ, որից՝ անվերադարձ – 105 մարդ, սանիտարական – 78, անօթևան բնակչության թիվը կկազմի - 530:

33. Համայնքում հնարավոր է բնակելի շենքերի, առանձնատների, կառույցների ու շինությունների հիմնական մասի լրիվ կամ մասնակի ավերում: Անօթևան մնացած բնակչությունը կացարաններով ապահովվում է հետևյալ ձևերով՝
1) ապակենտրոնացված տեղաբաշխում.
2) տեղավորում ճամբարներում.
3) կոլեկտիվ տեղավորում:.

34. Գետամեջ համայնքի տարածքում՝ բնակելի թաղամասերին կից գտնվող ազատ տարածությունում ստեղծվում է վրանային ավան, որտեղ տեղաբաշխվում են 530 մարդ: Համայնքի անօթևան մնացած բնակչության տեղաբաշխման հաշվարկը բերված է հավելված N 5-ում: Քարտեզ-սխեմա վրանային ավանների տեղակայման վայրերը հավելված N 11:

35. Բնակչության տարահանման նպատակով համայնքում գործող ուսումնական հաստատության բազայի հիման վրա ստեղծված է տարահանման հավաքակայան:

### 4.2. Տարահանման կազմակերպումը ջրածածկման տարածքներից

36. Հրազդան գետի հունի բարձրացման ժամանակ Գետամեջ համայնքի ափամերձ շինությունները կարող են հայտնվել ջրածածկման տարածքում:
Վտանգավոր (ջրածածկում) տարածքում կարող է հայտնվել թվով 6 բնակելի առանձնատներ, որտեղ բնակչության թիվը կազմում է 24 մարդ, որից 10 արական սեռի, իսկ 14 իգական:
Վտանգավոր տարածքում գտնվող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կազմում է խոշոր եղջերավոր անասուններ 5 գլուխ, խոզեր 120, և թռչուններ 56 թև:
37. Վտանգավոր (ջրածածկման) գոտում գտնվող բնակչությունը տարահանվում է համայնքի անվտանգ տարածք հետիոտն: (Հավելված 11 քարտեզ սխեմա):

## V. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

38. Համաձայն Հայաստանի Հանրապետության բնակչության տարահանման պլանի Ռազմական դրության ժամանակ համայնքից տարահանման միջոցառումներ չեն իրականացվում:

## VI. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

39. Համայնքի տարահանման միջոցառումների ապահովումն իրականացվում է համայնքի ղեկավար մարմինների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պլանների միջոցով:
40. Բնակչության տարահանման կազմակերպված անցկացումը իր մեջ ներառում է տրանսպորտային, կապի և ազդարարման ինժեներական, նյութատեխնիկական, բժշկական, հասարակական կարգի պահպանման, կոմունալ-կենցաղային միջոցառումների ապահովումը:
6.1. **Տրանսպորտային ապահովումը ընդգրկում է** տարահանման փոխադրումների համար նախատեսված տրանսպորտային միջոցների նախապատրաստման, բաշխման և շահագործման միջոցառումների համալիր և համակարգվում է համայնքի քաղ պաշտպանության տրանսպորտային ծառայության կողմից
41. Անհրաժեշտության դեպքում տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովումն իրականացվում է համայնքում առկա տրանսպորտային միջոցներով:

6.2. **Բժշկական ապահովումը ընդգրկում** է տարահանման (ընդունման) հավաքակայաններում, տարահանման երթուղիներում տարահանվողներին ժամանակին բժշկական օգնության ցուցաբերման կազմակերպում:
42. Համայնքում բուժօգնության միջոցառումներն իրականացվում են ՀՀ Կոտայքի մարզային ՔՊ բժշկական ծառայության կողմից, սեփական միջոցների հաշվին՝ ՀՀ պետական բյուջեից, հետագա փոխհատուցմամբ (ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով):

43. Բժշկական ապահովումն իր մեջ ընդգրկում է նաև հետևյալ միջոցառումները՝

1) տարահանվածների ժամանակավոր և մշտական տեղակայման վայրերի սանիտարա-հիգիենիկ վիճակի հսկողությունը,

2) սննդի և ջրի որակի նկատմամբ հսկողության սահմանումը.

3) վարակազերծման միջոցառումների իրականացումը.

4) վարակիչ հիվանդների ժամանակին հայտնաբերումը և մեկուսացումը.

5) բնակչության բաղնիքա-լվացքային սպասարկման կազմակերպման հսկողությունը:

**6.3. Հասարակական կարգի պահպանումը** իրականացվում է ՀՀ Կոտայքի մարզային ՔՊ հասարակական կարգի պահպանման ուժերով, ինչպես նաև Գետամեջ համայնքի քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի պահպանության կազմավորումներով, որոնց կողմից իրականացվող միջոցառումները հետևյալն են՝

1) հասարակական կարգի պահպանումը և անվտանգության ապահովումը տարահանման (ընդունման) հավաքակայաններում, միջանկյալ կետերում, նստեցման և իջեցման կետերում, տարահանման երթուղիներում և անվտանգ գոտու տեղաբաշխման վայրերում.

2) տարահանման երթուղիներում երթևեկության կարգավորումը.

3) տարահանվողների հաշվառման կազմակերպումը և տեղեկատվական աշխատանքի (տվյալների բազայի ստեղծում քաղաքացիների գտնվելու վայրի և այլ տեղեկությունների մասին) կազմակերպումը.

4) տարահանման երթուղիների անցողունակության և տարահանված բնակավայրերում ու կազմակերպություններում մնացած գույքի պահպանումը:

